ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
Հանրային հեռուստաընկերության «Կնոջ օրագիր» հաղորդաշարի վերաբերյալ

Հանրային հեռարձակողի խորհուրդը 2023 թ. ապրիլի 14-ին քննարկել է Հանրային հեռուստաընկերության «Կնոջ օրագիր» հաղորդաշարի եթեր հեռարձակելու նպատակահարմարությունը և տվել հետևյալ Եզրակացությունը.

- հիմք ընդունելով Խորհրդի անդամների ուսումնասիրությունը, որը ներառել է «Կնոջ օրագիր» հաղորդաշարի ընդհանուր բովանդակությունը, առանձին թողարկումներում հնչած կարծիքները, հաղորդավարի հարցադրումներն ու արձագանքը այդ կարծիքներին (մասնավորապես՝ հաղորդաշարի 3. 11. 2022թ. , 14. 11. 2022թ. , 21. 03. 2023թ. , 10. 04. 2023թ. թողարկումներում),
- լսելով հաղորդաշարի վերաբերյալ Ընկերության գործադիր տնօրենի և գլխավոր պրոդյուսերի պարզաբանումները,
- հաշվի առնելով հեռուստադիտողների բացասական արձագանքը «Կնոջ օրագիր» հաղորդաշարում հնչած տեսակետների վերաբերյալ, որի մասին ստացվել է նաև Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի (20.01.2023թ) նամակը՝

Հանրային հեռարձակողի խորհուրդը եզրակացրեց.

1. «Կնոջ օրագիր» հաղորդաշարի մաս կազմող «Տղամարդիկ՝ կանանց մասին» խորագիրը չի համապատասխանում հանրային հեռարձակման սկզբունքներին և առաքելությանը։

2. Հաղորդմանը մասնակից հյուրերի կարծիքը հաճախ արտացոլում է կնոջ նկատմամբ խտրական վերաբերմունք և հաստատվում որպես հանդուրժելի փաստ, ինչը արգելված է «Տեսալսողական մեդիայի մասին» ՀՀ օրենքի Հոդված 9-ի 7-րդ կետով։

3. Հաղորդավարի անձնական համակրանքը հնչած կարծիքների վերաբերյալ, որն արտահայտվում է նրա ուղիղ խոսքով, հակասում է լրագրողական էթիկայի կանոններին (Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների Կանոնագիր, 5. 1)։

4. Հաղորդումից դուրս, սոցիալական ցանցերում և մամուլում այս թեմայով ծավալված փոխադարձ մեղադրանքները չեն նպաստում հանրային համերաշխության հաստատմանը։

5. Հանրային հեռարձակողի խորհուրդը առաջարկում է Հանրային հեռուստաընկերությանը ժամանակավորապես դադարեցնել «Կնոջ օրագիր» հաղորդաշարի հեռարձակումը և սահմանված ընթացակարգով ներկայացնել նույն հաղորդաշարի նոր բովանդակությունը։

Հանրային հեռարձակողի խորհուրդ